

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/2

16 ապրիլի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.03.2012թ-ի նիստում քննության է առնվել «Առագաստ Բեն ՎԵԲ Թեքնոլոջի» ՍՊԸ 16.03.2012թ-ին բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 07.03.2012թ. հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության ուսումնասիրության թիվ 2202081 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն չեղյալ է համարվել «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 07.03.2012թ. թիվ 2202081 արձանագրությունը, իսկ 793575 դրամն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու վերաբերյալ պահանջը մերժվել է:

«ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 23.02.2012թ. թիվ 2202081 հանձնարարագրի համաձայն, «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Առագաստ Բեն ՎԵԲ Թեքնոլոջի» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության ուսումնասիրություն: Արդյունքում 07.03.2012թ-ին կազմվել է «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության ուսումնասիրության թիվ 2202081 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն):

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

«Առագաստ Բեն ՎԵԲ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերող ձեռքբերումների գծով ընկերության կողմից 01.04.2011-31.12.2011թ.թ. իրականացված գործարքների մասով դիմումով հաշվանցման (վերադարձման) ներկայացված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 1118319 դրամ:

Համաձայն Արաբկիրի ՀՏ տեղեկատվական բազայի և ընկերության ԱԱՀ-ի անձնական հաշվի քարտի տվյալների ԱԱՀ-ի դեբետային մնացորդն առ 20.01.2012թ. կազմում է 1118319 դրամ:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը կազմում է 16963050 դրամ, որին հասանելիք (20% հաշվարկային) ԱԱՀ-ի գումարը, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, կազմում է 3392610 դրամ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար ընկերության դեբետային մնացորդը ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի համաձայն կազմում է 1118319 դրամ:

Այսպիսով՝ 1118319 դրամ գումարից ենթակա է սահմանված կարգով հաշվանցման այլ հարկային պարտավորությունների դիմաց 324744 դրամը, իսկ 793575 դրամը, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 12-րդ կետի, ենթակա չէ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների դիմաց:

«Առագաստ Բեն ՎԵԲ Թեքնոլոջի» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունն աշխատում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում և զբաղվում է համակարգչային ծրագրային համակարգերի մշակմամբ:

2011թ. հունիսի 21-ին աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ տարածք ենք ներմուծել տնտեսական գույք (գրասենյակային կահույք) և սարքավորումներ (տեսահսկման համակարգեր, տեսախցիկներ) 3'684'160 դրամ մաքսային արժեքով, որի համար

Նոտանը վճարել ենք 793'575 դրամ ԱԱՀ, ինչն արտացոլված է 2011թ. 2-րդ եռամսյակի Հ-ի հաշվարկում:

2012 թ. հունվարի 20-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ ներկայացվել է դիմում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի՝ ցանկանալով ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հաշվանցել այլ հարկային պարտավորությունների դիմաց: Արաբկիրի ՀՏ պետի 2012 թ. փետրվարի 23-ի թիվ 2202081 հանձնարարագրի համաձայն կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում կազմվել է թիվ 2202081 արձանագրությունը, որի հետ մենք համաձայն ենք, բացառությամբ մի կետի:

Հաշվանցման ներկայացված 1118319 դրամ գումարից որպես հաշվանցման ենթակա ընդունվել է 324744 դրամը, իսկ 21.06.2011թ. ներմուծված ապրանքների դիմաց վճարված 793'575 դրամը արձանագրվել է որպես այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ոչ ենթակա, հղում անելով ՀԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 12-րդ կետին:

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 12-րդ կետում ասվում է, որ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափը կիրառվում է ... «12) հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ», ինչը որևէ կերպ չի առնչվում մերժված 793575 դրամ գումարին: Ընկերությունը որևէ առնչություն չունի օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների հետ:

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի Հավելված 1-ի 16-րդ կետի համաձայն. «ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու համար հարկ վճարողը համապատասխան հարկային մարմին (ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնող անձանց) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը»: ...

դ) ձեռք բերված (ներմուծված) ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների հարկային հաշիվները (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը), ձեռքբերումների դիմաց մատակարարներին կատարված վճարումը հավաստող փաստաթղթերը (բանկային հանձնարարագրերը, բանկի հաշվարկային հաշվից քաղվածքները, դրամարկղի ելքի օրդերները):

Այսինքն, ձեռք բերված և ներմուծված ապրանքների գծով ԱԱՀ-ի գումարները նշված կարգի կիրառման իմաստով չեն տարբերակվում և նույնական են:

Ընդգծենք նաև, որ նշված ժամանակահատվածում (որը համընկնում է ընկերության գործելու ժամանակահատվածի հետ) իրացման շրջանառությունը գոյացել է միայն ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից՝ համաձայն ՀԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 4-րդ պարբերության և 16 հոդվածի 8-րդ կետի:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է վերանայել ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրությունը 793575 դրամ գումարի մասով և ՀՀ տարածք ներմուծված ապրանքների համար վճարված 793575 դրամ գումարը նույնպես հաշվանցել այլ հարկային պարտավորությունների դիմաց Արաբկիրի ՀՏ ներկայացրած դիմումում արտացոլված չափերով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչ և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը մասամբ հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Գանգատի բննարկման ընթացքում նշվեց, որ ընկերությունը զբաղվում է համակարգչային ծրագրային համակարգերի՝ նշակմամբ:

Ընկերության աշխատանքներն իրականացման նպատակով 2011թ. հունիսի 21-ին ՀՀ տարածք ենք ներմուծել տնտեսական գույք (գրասենյակային կահույք), ինչպես նաև սարքավորումներ (տեսահսկման համակարգեր, տեսախցիկներ) 3684160 դրամ մաքսային արժեքով, որի համար մաքսատանը վճարել է 793575 դրամ ԱԱՀ:

վերականգնողական ներկայացուցիչը նշեց, որ հիշատակված բարի աթոռները ներմուծվել են հարկակցություններ կազմակերպելու նպատակով համապատասխան պայմաններ ստեղծելու համար, ինչը նմանատիվ գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար ընդունված պրակտիկա է ողջ աշխարհում: Ինչ վերաբերում է ներմուծված մնացած գույքին, ապա այն անհրաժեշտ է ընկերության բնականոն աշխատանքները կազմակերպելու համար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով կողմերի ներկայացված փաստարկները և գործում առկա ապացույցները, եկավ եզրակացության, որ ուսումնասիրության ընթացքում չեն ստեղծվել համապատասխան ապացույցներ 793575 դրամ ԱԱՀ-ի գումարն այլ հարկային պարտավորությունների դիմաց չհաշվանցելու հանգամանքը հիմնավորելու համար:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ արձանագրությունը ենթակա է չեղյալ համարման:

Ինչ վերաբերում է ընկերության գանգատով բերված պահանջին՝ 793575 դրամն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու վերաբերյալ, ապա այն հիմնավոր չէ, քանի որ 793575 դրամն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավունքը պետք է հաստատվի սահմանված կարգով իրականացվող ուսումնասիրության արդյունքում:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է համապատասխան եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 07.03.2012թ. թիվ 2202081 արձանագրությունը:

2. Արտահանման գործարքներին վերաբերող ավելացված արժեքի հարկի դեբետային մնացորդը՝ 793575 դրամ ընդհանուր գումարով, այլ հարկային պարտավորությունների դիմաց կհաշվանցվի սահմանված կարգով ուսումնասիրություն կատարվելուց հետո:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ԱՂԱՍԵՂՅԱՆ